

ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՑԵԼՈՒ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Եթե կարծում եք, որ դարձել եք Ձեր կանխիկ դրամական օգնության՝ էլեկտրոնային փոխանցման քարտով (Electronic Benefit Transfer, EBT) ստացվող նպաստների էլեկտրոնային գողության զոհ, զանգահարեք Կալիֆոռնիա նահանգի EBT Հաճախորդների սպասարկման բաժնի անվճար համարով:

⇒ EBT Հաճախորդների սպասարկման բաժինն աշխատում է օրական 24 ժամ և շաբաթական 7 օր՝
1-877-328-9677

Ձեր EBT կանխիկ դրամական օգնության նպաստները կարող են վերականգնվել, եթե՝

- EBT քարտը Ձեզ մոտ է եղել, երբ կանխիկ դրամական օգնության նպաստները գողացվել են Ձեր EBT հաշվից.
- Դուք զանգահարել եք Կալիֆոռնիա նահանգի EBT Հաճախորդների սպասարկման բաժնի Թեժ գիծ և Ձեր դրամական նպաստների կորստի մասին հայտնել եք EBT Հաճախորդների սպասարկման բաժնի ներկայացուցչին: Հաճախորդների սպասարկման բաժինը Ձեզ կտա վիճելի հայցի համար: Այդ համարը գրեք «Ձեկույց կանխիկ դրամական օգնության էլեկտրոնային գողության մասին» EBT 2259 ձևի մեջ:
- ոստիկանությանը զեկույց եք ներկայացրել Ձեր գողացված կանխիկ դրամական օգնության նպաստների մասին.
- ամբողջովին լրացրել եք EBT 2259 ձևը և այն հանձնել եք Ձեր վարչական շրջանի սոցիալական աշխատողին.
- ոստիկանությանը ներկայացված զեկույցի համարը գրել եք EBT 2259 ձևում կամ վարչական շրջանի սոցիալական աշխատողին ասել եք, թե ինչու չեք կարողացել զեկույցել ոստիկանությանը:

Ոստիկանությանը ներկայացվող զեկույցի լրացման ցուցումներ.

- դիմեք տեղական քաղաքային կամ շրջանային ոստիկանության բաժանմունք: **ՄԻ ԶԱՆԳԵՔ 911:** Փնտրեք ոստիկանության բաժանմունքի ոչ արտակարգ իրավիճակների հեռախոսահամարը.
- կարող եք ոստիկանությանը զեկույցել հեռախոսով, անձամբ կամ ոստիկանության բաժանմունքի համացանցային կայքի միջոցով: Ձեր տեղական ոստիկանության բաժանմունքից իմացեք զեկույց ներկայացնելու կարգը.
- ոստիկանությանը ներկայացված զեկույցը կունենա գրանցման համար: Պահեք այդ համարի մի պատճենը: Հարկավոր է այն գրել EBT 2259 ձևի մեջ.
- Դուք կարող եք հետաձգել ոստիկանությանը զեկույց ներկայացնելը, եթե ունեք բավարար հիմք: Զանգահարեք Ձեր վարչական շրջանի սոցիալական աշխատողին և բացատրեք ոստիկանությանը չզեկույցելու բավարար հիմքը, որպեսզի կատարվի բավարար հիմքի ուսումնասիրություն.
- **EBT քարտով կատարված էլեկտրոնային գողության մասին զեկույցը և հետագա հայցերը կարող են ուղարկվել հետաքննության:**

EBT քարտով ստացվող կանխիկ դրամական օգնության նպաստները **չեն կարող** վերականգնվել, եթե՝

- էլեկտրոնային գողության գործառնության թվականից հետո 90 օրացուցային օրվա ընթացքում չեք ներկայացնում լրացված EBT 2259 ձևը.
- Ձեր EBT քարտը **կորել կամ գողացվել է**, և (կամ) Դուք Ձեր անձնական նույնականացման համարը (Personal Identification Number, PIN) և (կամ) EBT քարտի համարը տվել եք ինչ-որ մեկին:

Խնդրում ենք զանգահարել Ձեր վարչական շրջանի սոցիալական աշխատողին կամ այցելել վարչական շրջանի սոցիալական օգնության տեղական գրասենյակ, եթե ունեք հարցեր կամ EBT 2259 ձևը լրացնելու օգնության կարիք:

ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՔԱՐՏԻ (EBT) ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

- Եթե Ձեր EBT քարտը կորել կամ գողացվել է, անմիջապես այդ մասին հայտնեք EBT Հաճախորդների սպասարկման բաժնին 1-877-328-9677 հեռախոսահամարով, որպեսզի նրանք կարողանան չեղյալ համարել Ձեր քարտն ու տալ նորը:
- Էլեկտրոնային գողությունը անձնական տվյալների հափշտակման մի ձև է: Ձեր EBT քարտն ու անձնական նույնականացման համարը (PIN) պահեք ապահով: Գաղտնի պահեք Ձեր PIN-ը:
- Ձեզ մոտ մի պահեք սոցիալական ապահովության քարտի համարը (SSN):
- **ԵՐԲԵՔ** մի մուտքագրեք PIN-ը, եթե կարծում եք, որ ինչ-որ մեկը հետևում է Ձեզ: Որևէ մեկը կարող է գողանալ Ձեր EBT նպաստները, եթե իմանա EBT քարտի համարն ու PIN կոդը:
- PIN-ը մուտքագրելիս ձեռքի ափով ծածկեք EBT ապարատի ստեղնախումբը:
- Ձեր PIN կոդը **ԵՐԲԵՔ** մի ասեք խանութի աշխատողին, նույնիսկ եթե նա հարցնի դա: Եթե Ձեր քարտն օգտագործելու հարցում օգնության կարիք ունեք, գուցե ցանկանաք նկատի ունենալ որևէ վստահելի անձի որպես Ձեր լիազոր ներկայացուցիչը նշելու տարբերակը: Այս հարցը կարգավորելու համար դիմեք Ձեր վարչական շրջանի սոցիալական աշխատողին:
- Դուք կարող եք ցանկացած ժամանակ փոխել Ձեր PIN-ը՝ զանգահարելով EBT Հաճախորդների սպասարկման բաժնին 1-877-328-9677 հեռախոսահամարով կամ այցելելով Ձեր վարչական շրջանի սոցիալական օգնության տեղական գրասենյակ:
- Ձեր PIN համարը չպետք է լինի 1234, 1111 կամ 0000: Գողերը հեշտությամբ են կռահում այդ PIN համարները:
- Եթե Ձեր ընտանիքում կան այլ EBT քարտատերեր, նրանց նույնպես հիշեցրեք իրենց EBT քարտերն ու PIN համարները ապահով պահելու մասին: Հնարավոր է, որ Ձեր քարտի համարը, սոցիալական ապահովության համարը (SSN) և ծննդյան թվականը իմացող որևէ մեկը կարողանա փոխել Ձեր PIN-ը:
- Եթե Ձեր EBT քարտը չի գործում, մի շարունակեք քարտն անցկացնել EBT ապարատի միջով: Հենց այդպես է կատարվում էլեկտրոնային գողությունը:
- Հնարավորության դեպքում գնումներ մի կատարեք այն խանութում, որը, Ձեր կարծիքով, կարող է գողանալ Ձեր տվյալները կամ նպաստները:
- **ՄԻ** օգտագործեք EBT քարտն այնպիսի բանկոմատով (ATM) կամ EBT ապարատով, որը վնասված կամ փչացված է թվում. հնարավոր է, որ այն գողանա Ձեր EBT քարտի տվյալներն ու PIN-ը:
- Եթե այլևս չեք ցանկանում EBT քարտ օգտագործել դրամական նպաստների համար, դրանք կարող են ուղղակիորեն մուտքագրվել Ձեր բանկային հաշվին: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմեք Ձեր վարչական շրջանի սոցիալական աշխատողին կամ սոցիալական օգնության տեղական գրասենյակին:
- EBT քարտով կատարված ցանկացած կասկածելի գործունեության մասին հայտնեք խարդախության մասին տեղեկացման թեժ գծին 1-800-344-8477 հեռախոսահամարով:

ՁԵԿՈՒՅՑ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ցուցումներ. Ամբողջովին լրացրեք այս ձևը և այն վերադարձրեք Ձեր վարչական շրջանի սոցիալական աշխատողին:

ՍՏԱՑՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԱՆՈՒՆԸ	ԱԶԳԱՆՈՒՆԸ	EBT ՔԱՐՏԻ ՀԱՄԱՐԸ
--------	-----------	------------------

ՓՈՂՈՑ/Բ. ԱՐԿՂ

ՔԱՂԱՔԸ	ՆԱՀԱՆԳԸ	ՓՈՍՍՈՒՄԱՆ ԻՆԴԵՔՍԸ
--------	---------	-------------------

ՀԵՌԱՄՈՍԱՀԱՄԱՐԸ	ԷԼ. ՓՈՍՏԸ
----------------	-----------

Ես կարծում եմ, որ իմ կանխիկ դրամական օգնության նպաստները գողացվել են:

Իմ EBT քարտն ամբողջ ժամանակ եղել է ինձ մոտ՝ Այո Ոչ

Ես իմ EBT քարտը վերջին անգամ օգտագործել եմ _____ -ին _____
ԹՎԱԿԱՆԸ ՏԵՂԸ

-ում \$ _____ -ի չափով:
ԳՈՒՄԱՐԸ

Կարծում եմ՝ ես գիտեմ, թե ով է գողացել իմ նպաստները՝ Այո Ոչ
Եթե այո, ստորև գրեք անձի (անձանց) անունը, կապը Ձեզ հետ, հասցեն և հեռախոսահամարը՝

Ես իմ անձնական նույնականացման համարը (PIN) կամ EBT քարտի համարը տվել եմ մեկ ուրիշին՝ Այո Ոչ
Եթե այո, ստորև գրեք այն մարդու (մարդկանց) անունը (անունները), կապը Ձեզ հետ, հասցեները և հեռախոսահամարները, ում տվել էք Ձեր PIN-ը կամ EBT քարտի համարը

Ես ոստիկանությանը զեկուցել եմ _____ -ին: Ես զեկուցել եմ, որ գողացվել է \$ _____ :
ԹՎԱԿԱՆԸ ԳՈՒՄԱՐԸ

Ոստիկանությանը ներկայացված զեկույց # _____

Ոստիկանության բաժանմունքի անվանումը՝ _____

ԶԵԿՈՒՅՑ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՑԻՆ ԳՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Խնդրում ենք ստորև թվարկել էլեկտրոնային գողության բոլոր կանխիկ գործարքները՝

ԹՎԱԿԱՆԸ	ԳՈՒՄԱՐԸ	ԽԱՆՈՒԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԽԱՆՈՒԹԻ ՀԱՍՑԵՆ	ՎԻՃԵԼԻ ՀԱՅՑ # (Էթե հայտնի է)
	\$			
	\$			
	\$			
	\$			
	\$			
	\$			
	\$			
	\$			
ԸՆԴԱՄԵՆԸ				

Եթե ունեք լրացուցիչ տեղեկություններ կամ մանրամասներ, խնդրում ենք տրամադրել ստորև.

Ես Ամերիկայի Միացյալ Նահանգների և Կալիֆոռնիա նահանգի օրենքներով կեղծ վկայության համար սահմանված պատժի անի ներքո հայտարարում եմ, որ տեղեկությունները, որոնք ներկայացրել եմ այս ձևի մեջ, ճշմարիտ են, ստույգ են և ավարտուն են այնքանով, որքանով տեղյակ եմ: Ես հասկանում եմ, որ եթե գիտակցաբար տամ սխալ տեղեկատվություն կամ չներկայացնեմ տեղեկություններ, որոնք, իմ իմանալով, ճշմարիտ են, և ստանամ կանխիկ դրամական օգնություն, որը ստանալու իրավունք չունեմ, ես պատասխանատու կլինեմ փոխհատուցման համար, կարող եմ գրկվել կանխիկ դրամական օգնություն ստանալու իրավունքից, կարող եմ տուգանվել և մեղադրվել հանցանք գործելու մեջ:

ՍՏԱՑՈՂԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԹՎԱԿԱՆԸ
ՔԱՐՏԱՏԻՐՈՋ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (ԵԹԵ ՔԱՐՏԱՏԵՐՆ ՈՒ ՍՏԱՑՈՂԸ ՏԱՐԲԵՐ ԵՆ)	ԹՎԱԿԱՆԸ

ՄԻԱՑՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԳՐԱՄԵՆՑԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ /ՀԵՌՆԱՊԱՏՃԵՆԸ՝ ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ (CDSS) (916) 657-2207 (COUNTY USE ONLY)

CASE NAME:	COUNTY:	CASE NUMBER:	DATE RECEIVED:
COUNTY WORKER NAME:	WORKER PHONE NUMBER:	WORKER EMAIL:	